ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ

Կիրակի, հոկտ. 13-ին, հայոց ծխական դպրոցի դահլիճում կայացաւ աշակերտական ցերեկոյթ տառերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի առիթով։

Հանդէսը բացեց աւագ ուսուց. Մ. Մարգարեան, համառօտ կերպով ծանօթացնելով հանդիսականներին տառերի գիւտի և հայկական տպագրութեան պատմութեան հետ։ Ապա աշակերտներից պատրաստած փոքրիկ խումբը երգեց մի քանի երգեր և կարդացուեցին ոտանաւորներ։

Հանդէսը փակեց Մ. Մարգարեանը, յայտնելով, որ մանկավարժական խորհուրդը ցանկանալով յաւերժացնել Մեծ Տօնը, վճռել է կէսօրից յետոյ, շաբաթական երեք անգամ, պարապել դրպրոցում այն երեխաների հետ, որոնց ծնողները զանազան պատճառներից դրդուած չեն կարողանում երեխաներին դպրոց ուղարկել մայրենի լեզուն սովորեցնելու համար։ Մանկավարժական ժողովի այդ վճիռը հանդիսականների կողմից արժանացաւ բուռն ծափահարութեան։

Ցաւօք սրտի պիտի յայտնեմ, որ տեղիս հայկական գաղութը շատ անտարբեր վերաբերուեց դէպի համազգային այդ մեծ տօնը։ Չնայած որ հրաւէրներ էին ուղարկուած բոլորին, բայց և այնպէս հանդէսին ներկայ գտնուեցան 10—15 հոգի (չհաշուած աշակերտութիւնը)։ Տեղումս կան բարեգործական ընկերութիւններ, սիրողների խումբ, այն ինչ այդ օրը դրանցից ոչ ոք չէր եկել։

Հանդիսական

Ա. Զ Ա. Զ Ո Ի Ր

(Ղազախի գաւառ)

Շաբաթ, հոկտ. 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, ծխական դպրոցի դահլիճում կայացաւ դպրոցական հանդէս՝ նուիրուած հայոց տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակի մեծ յոբելեանին։

Հանդէսը բացեց ուսուցիչը «Հայոց տառերի գիւտի և տպագրութեան պատմութիւնը» բանախօսութեամբ։ Բաւական ընդարձակ խօսեց հայոց հին և նոր գրականութեան զարգացման մասին։ Բերեց ցիտատներ սկսած Աբովեանից մինչև նորագոյն գրողների մտքի ստեղծագործութիւնները։

Այնուհետև աշակերտները խաղացին մանկական պիեսներ, արտասանեցին՝ ըստ պատշաճի՝ ոտանաւորներ, եղան խմբական և սոլո երգեր։

Հանդիսականներին ցոյց տուեցին սինեմատոգրաֆիական գործիքով կենդանի նկարներ, որը հրճուանք պատճառեց ներկայ եղողներին։

Հանդէսից մնացած արդիւնքը, հինգ ռուբլի, ուղարկուեց Էջմիածնի Սինոդին։

Պ.-եան